

«ՌՈՍՏԱՄԵ ՋԱԼԻ» ՔՐԴԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

«Ռոստամե Ջալ» էպոսի պատումները լայն տարածում են գտել նաև քրդերի մեջ: Դրանք առնչվում են հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսու «Շահնամեի» հետ, ուր մի շարք պոեմներ նվիրված են Ռոստամ Ջալի սխրագործություններին: Սույն հոդվածը, սակայն, նվիրված է հիմնականում «Ռոստամ Ջալի» քրդական պատումների բնութագրմանը, և միայն վերջում թեթևակի կանդորադառնանք դրանց և «Շահնամեի» աղերսակցություններին:

«Ռոստամե Ջալի» նախնական հորինվածքների մասին հետաքրքիր տեսակետ է հայտնում ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդը, ըստ որի մ. թ. ա. III դ. «Արշակունիների էպոխայում Իրանի ազգաբնակչության կազմի մեջ էին մտնում նաև այլ եկվորներ Միջին Ասիայից, այն է՝ սկյութացիներ, որոնցից մնաց Սեյստան (իրականում Սակստան) նահանգի անունը և որոնք աղղեցություն թողին իրանական ժողովուրդների էպոսի վրա. նրանց է պատկանում այդ էպոսի ամենաժողովրդական էպիզոդը՝ Ռոստեմ դյուցազնի մասին հղած տարբերակը¹: Այս նույն տեսակետին է նաև ճանաչված իրանագետ պրոֆեսոր Վ. Ի. Աբաևը²:

Սկյութացիների մոստամին (Ռոստեմին) վերաբերող այդ «էպիզոդը» իր հետագա զարգացումն է ապրել, նյութ դառնալով բազմաթիվ նոր տարբերակների: Այնուհետև, ժամանակի ընթացքում այդ տարբերակները հետզհետե միահյուսվել և մի ամբողջություն են կազմել, կրելով «Ռոստամե Ջալ» (Ջալի որդի Ռոստամ) և կամ «Ռոստամ Ջալ» ընդհանրացնող անունը, արտահայ-

¹ В. В. Бартольд, Иран, Ташкент, 1926, стр. 19.

² В. И. Абаев, Скифо-европейские изоглоссы, М., 1965, стр. 86.

տելով իրանական ժողովուրդների համատեղ պայքարը թուրանական հորդանների դեմ, դառնալով նրանց դարավոր պայքարի՝ ինքնապաշտպանության և հաղթանակի մեծագույն կոթողը:

Նման երևույթ մենք նկատում ենք և այլ ժողովուրդների մոտ: Այսպես, ռուսական բիլինաները նույնպես արտահայտում են սլավոնական ժողովուրդների պայքարը թաթարական հորդանների դեմ³: Եվ եթի ժամանակին այդ բիլինաները շամբողջացան գրական մի ծավալուն կոթողի մեջ, ապա նույնը չի կարելի ասել «Ռոստամի Զալի» ժողովրդական ճյուղերի մասին: Ինչպես հայտնի է, մեծ անուն բանաստեղծ Աբուլ Ղասիմ Ֆիրդուսին (934—1020) այդ էպոսի պատումները, ինչպես նաև բազմաթիվ այլ պատմական և առասպելական նյութեր ի մի բերելով և դրանք մշակելով ու շաղկապելով ստեղծեց իր անմահ «Շահնամե» (Մատյան թագավորաց) գրական կոթողը:

Այն, որ Ֆիրդուսին ի թիվս պատմական բազում հարուստ նյութերի, մեծ չափերով օգտվել է նաև բանահյուսական նմուշներից, ժողովրդական ավանդություններից և Ռոստամի մասին եղած հորինվածքներից, Ֆիրդուսագիտության մեջ նորություն չէ, իհարկե⁴, «Պարսկական վեպ իսկական մտքով պետք է համարել փահճականների առասպելները. թագավորների պատմությունը, որ կցված է դրանց, եկամուտ տարր է վեպի մեջ և նպատակ ունի լրացնել և պատմական միություն ու ամբողջություն մտցնել վիպական նյութի մեջ»⁵:

Այդ հանգամանքը հաստատվում է բանաստեղծի՝ Ֆիրդուսիի կողմից ևս: Նա իր մեծահամբավ գործում բազմիցս հիշել է, որ օգտվել է հին պատմություններից, առասպելներից, և այլ բանահյուսական ստեղծագործություններից: Այսպես, «Շահնամեի ծագումը» գլխում կարդում ենք.

Ինչ որ այժմ ես քեզ կասեմ՝ պատմել են դեռ շատ վաղուց
Հավաքել են ամեն պտուղ իմաստություն ճոխ այգուց⁶:

Այսպիսի խոստովանություն պոետն արել է նաև մի այլ տեղ՝ Ռոստամի հոր՝ «Զալի ծնունդը» գլխում.

³ «Былины». Вступительная статья, подбор текстов и примечания П. Д. Ухова, М., 1957, стр. 16—17.

⁴ Абуль Касим Заррә, Очерк литературы Ирана, «Восток», сборник второй, М.—Л., 1935, стр. 36. Ավ. Շահնավարյան, Շահնամեն և հայկական աղբյուրները, Երևան, 1967, էջ 69.

⁵ Ի. Աբրահամյան, Ֆիրդուսին և իր Շահնամեն, Թեհրան, 1934, էջ 122:

⁶ Ֆիրդուսի, Զալ և Ռուքսե, Շահնամեից, թարգմ. Ս. Ումադյան, Երևան, 1964, էջ 14:

Իսկ հս հիմա ձեզ կպատմեմ մի պատմություն հինավուրց, Ավանդական այս զրույցը մեզ հայտնի է շատ վաղուց⁷:

Ժողովրդական բանահյուսության և «Շահնամեի» այսպիսի փոխադարձ կապերի մասին ականավոր արևելագետ, ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին գրել է, որ «...Ֆիրդուսին, ստեղծելով իր էպոսը, այդ գանձարանի մեջ ամփոփեց Իրանի ֆեոդալական միջավայրի պատմական ավանդությունների և հին պատմվածքների ամբողջ հարստությունը, մի միջավայրի, որտեղ ապրել ու աճել է նա, իսկ այդ միջավայրը շատ ավելի լայն է, քան նրա հարազատ Խորասանի մարզի և նույնիսկ ամբողջ Իրանի սահմանները»⁸:

Այս իմաստով բացառված չէ, որ հանձարեղ պոետն օգտված լիներ նաև մյուս իրանական և ոչ իրանական արևելյան հարևան ժողովուրդների բանահյուսական նյութերից: «Մի՞թե,—գրում է Հ. Ա. Օրբելին,—քրդերի, օսերի, հայերի⁹, վրացիների, տաջիկների մեջ մինչև այսօր էլ չեն հնչում հեռավոր ժամանակներից պահպանված այն ռապսոդիաները, որոնք վեր են ածվել Ֆիրդուսու հստակ, հնչեղ մեղոդիկ ոտանավորներին»¹⁰:

Ռոստամը և նրա մասին հյուսված բազմաթիվ հին ու նոր ստեղծագործությունները, բացի պարսիկներից, տաջիկներից¹¹ և մյուս հարևան ժողովուրդներից, իրոք, շատ վաղուց հայտնի են իրանական լեզվախմբին պատկանող քրդերին ևս: Այս ժողովրդի մեջ նշված ստեղծագործության հերոսը և նրա շուրջը ստեղծված բանահյուսական տարբերակները այնքան են մերվել ժողովրդի բանահյուսությանը, որ Ռոստամին հրեմմն վերագրվում է քրդական ծագում: Այսպես, XVI դարի պատմաբան Շարաֆ-խան Բիթլիսին, հիշատակելով քուրդ ժողովրդի նշանավոր հերոսներին՝ Ռոստամի մասին գրել է. «Փղամարմին, քաջասիրտ, անխոցելի Ռոստամ Զալը, որ ապրում էր Քեյ Ղուբաթ թագավորի օրոք, բուրդ է»¹²:

⁷ Նույն տեղում, էջ 26:

⁸ А. И. Орбели, Шах-намэ, сб. «Фердовси», Л., 1934, стр. 2.

⁹ Դեռևս 5-րդ դարում Մ. Խորենացին իր «Պատմություն հայոց» գրքում հիշատակել է Ռոստամին, որ ըստ ավանդության ունեցել է հարյուր քառասուն փղի ուժ (տե՛ս Մ. Խորենացի «Պատմություն հայոց», Տփղիս, 1913, էջ 114—115): Այդ տեղեկությունը գրավոր ամենավաղ հիշատակությունն է Ռոստամի մասին:

¹⁰ И. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 540.

¹¹ В. И. Абаяев, Скифо-европейские изоглоссы, М., 1965, стр. 85.

¹² Шараф-хан Бидлиси, Шараф-наме, т. 1, М., 1967, стр. 84.

Ռոստամի Զալը քուրդ ժողովրդի մեջ այնքան հարազատ և հանրաճանաչ է դարձել, որ քրդական որոշ ցեղեր մինչև այսօր էլ իրենց համարում են այդ առասպելական հերոսի հետնորդները¹³։

Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Ղամշլու (ներկայումս Նդեզնուտ) գյուղի նախկին բնակիչ, Վանի նահանգից գաղթած քուրդ գրող, հանգուցյալ Ահմադե Միրազին մեզ հայտնեց մի ուրիշ տեղեկություն ևս, թե շկակ քրդական ցեղը՝ Ավդոյանց տոհմը (գերդաստանը), որ բնակվում է Իրանական Քրդստանում, նույնպես իրեն համարում է Ռոստամի Զալի զարմի հետնորդ և նրա անունով կոչվում։

Ռոստամի Զալը, նրա զարմի անդամները՝ Զալը, Բեժանը, Գևոն, Գուդարզը և մյուսները, իբրև ժողովրդի հերոսներ հիշվել ու հիշվում են ինչպես միջնադարյան, այնպես էլ ժամանակակից քուրդ գրողների ստեղծագործություններում։

XVII դարի քուրդ պոետ, մեծ հումանիստ Ահմադե Խանին, որին ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին դասում է Ֆիրդուսու և Ռուսթավելու շարքին¹⁴, իր «Մամ ու Զին» հայտնի պոեմում իբրև ուժի, գեղեցկության, ճշմարտության սիմվոլ հաճախ հիշում է Ռոստամին և մեծ սիրով խոսում նրա մյուս զինակիցների սխրագործությունների մասին¹⁵։

Ռոստամին ներբողներ են նվիրել նաև ժամանակակից պոետները։ Այսպես, Սիրիայի քուրդ առաջավոր պոետ Ջազարխոնը Ռոստամին դասում է քուրդ առասպելական այն հերոսների շարքը, որոնք պայքարել ու պայքարում են քուրդ ժողովրդի ազատագրման և ինքնուրույնության համար¹⁶։

Ռոստամի շուրջը ստեղծված դրույցները, ավանդությունները դարերի ընթացքում ամուր հող են գտել քուրդ ժողովրդի մեջ, իսկ Ռոստամը դարձել է ժողովրդի ամենասիրելի հերոսներից մեկը՝ ուժի, համարձակության, ազնվության շափանիշը։ Այդ առումով նա հանդես է գալիս նաև բանահյուսական այլ նմուշներում՝ հեքիաթներում, հերոսական և սիրային երգերում, վիպերգերում և այլն։ Այսպես, «Դալալ» տարածված երգում քուրդ սիրահարված

¹³ E. B. Soane, To Mesopotamia and Kurdistan in disguise, London, 1926, p. 377.

¹⁴ Вводная статья И. А. Орбели к сборнику «Памятники эпохи Руставели», Л., 1938, стр. 1—2.

¹⁵ Ахмед Хани, Мам и Зин. Критический текст, перевод, предисловие и указатели М. Б. Руденко, М., 1962, стр. 52, 64, 70, 139, 158, 164, 177, 182.

¹⁶ Cegerxwin, Sewra azadi, Sam, 1954.

աղջիկը դիմելով իր սիրած երիտասարդին ասում է. «Այ քեզ մատաղ, դու որ կաս ինձ համար Ռախշե Բալաքի հեծյալ Ռոստամին Ջալն ես, որի կուրծքը նման է Քնքո բերդի պարիսպներին»:

Ռոստամին Ջալը որդեգրվելով քուրդ ժողովրդի կողմից, բանահյուսության մեջ հիշվում է իր յոթ նախորդներով կամ ինչպես ասում են՝ իր յոթը պորտով, մի հինավուրց սովորով, որ մինչև այսօր էլ պահպանվում է ժողովրդի մեջ: Հիշյալ նախորդներն են՝ Ղարամանը, Նարիմանը, Սամը, Քամը, Դալը, Ջալը և ապա Ռոստամը, այսպես.

Р'остәм көр'е Зал,	Ռոստամ կուռե Ջալ,
Зал көр'е Дал,	Ջալ կուռե Դալ,
Дал көр'е К'ам,	Դալ կուռե Քամ,
К'ам көр'е Сам,	Քամ կուռե Սամ,
Сам көр'е Нәриман,	Սամ կուռե Նարիման,
Нәриман көр'е Қәрәман,	Նարիման կուռե Ղարաման.
կամ՝ Р'остәме Зал,	Ռոստամին Ջալ,
Зале Дал,	Ջալե Դալ,
Дале К'ам,	Դալե Քամ,
К'аме Сам,	Քամե Սամ,
Саме Нәриман,	Սամե Նարիման,
Нәримане Қәрәман.	Նարիմանե Ղարաման:

Թարգմանաբար նշանակում է, թե Ռոստամը Ջալի որդին է, Ջալը՝ Դալի, Դալը՝ Քամի, Քամը՝ Սամի, Սամը՝ Նարիմանի, Նարիմանը՝ Ղարամանի¹⁷:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ այդ էպոսի հերոսների անձնանունները քրդերի մեջ ևս շատ են սիրված ու տարածված և շատ քրդեր այժմ էլ կրում են Ռոստամ, Ֆարամազ, Բրզո, Սարգանգազար, Ֆրանգիս, Թուզո, Ալվազ, Բեժան (որ նաև ձիու անունն է), Մանիշա և այլ անուններ:

Այդ հերոսները թե անձնանուններով, թե իրենց շուրջը ստեղծված հերոսապատումների տարբերակներով հարազատ լինելով

¹⁷ Բնականաբար անձնանուններն իրար հետ շաղկապված են քրդերեն լեզվի քերականական կապակցությունների համաձայն—с (հ) և—и —(ի) իդաֆետների միջոցով: Այդպիսի իդաֆետներով են իրար հետ կապված նաև մյուս հերոսների անձնանունները, ինչպես՝ Մեհրաբե Ղարլ, Ղալե Գարգար, Ժիրկե Մլա, Խալուս Նարազա, Լոշի Ջալըմ, Աբուլեթի բլն Ջալեթ, Սալմանի Սընդի, Խաուսարի Շեր և ուրիշներ:

քուրդ ժողովրդին, հաճախ նույնիսկ նրա անվան տակ են հանդես գալիս, օրինակ, «Ռոստամե Զալ և Աֆրասյաբը» քրդական տարբերակում ասվում է.

Աֆրասյաբն հարցնում է Փիրանին.

—Մրանք ուզե՞ր են, որ կու՞մ են մեր դեմ:

—Դրանք,—ասում է Փիրանը,—քրդերի ճտերն են (խոսքը վերաբերում է Ռոստամի որդիներին՝ Զոհրաբին և Ֆարմազին), իսկ եթե դու նրանց հորը հանդիպես, վիճակդ ի՞նչ կլինի:

Բացի դրանից, ըստ մեր ձեռքի տակ եղած պատումների, Ռոստամը երևան է գալիս նաև ուրիշ՝ գողարդյա, զարոյա, նավզարյա և քուրդ այլ տոհմերի ներկայացուցիչների հետ¹⁸:

Ներկայումս մեր ձեռքի տակ են գտնվում «Ռոստամե Զալ» էպոսի քսանից ավելի քրդական պատումները, որ գրի ենք առել տարիների ընթացքում: Դրանցից են՝ «Զալի հեթաթը», «Ռուդաւան», «Ռոստամի և Մըշըրըղի կռիվը», «Ռոստամի մանկությունը և կռիվը», «Ռոստամը գնում է Զինաստան», «Ռոստամե Զալը և իր տղա Բրզոն», «Ռոստամը և իր տղա Ֆարամազը», «Սպիտակ դևի և Ռոստամե Զալի կռիվը», «Ռոստամի և Ալֆասյարի կռիվը», «Ռոստամի վախճանը» և ուրիշներ: Այդքան շատ ստեղծագործությունները մեզ հիմք հն տալիս ասելու, որ ողջ ժողովուրդն է մասնակցել այդ էպոսի տարբերակների փոխառմանը, հորինմանը, մշակմանը, ճյուղավորմանը¹⁹, տարածմանը և դարերի խոսքից սերնդն սերունդ ավանդելով հասցրել է մինչև մեր օրերը, դարձրել մի ամբողջական գեղարվեստական ստեղծագործություն՝ իր հետաքրքիր սկզբնավորումով և ողբերգական վախճանով, որ հայտնի է «Ռոստամե Զալ» (Զալի որդի Ռոստամ) խորագրով:

¹⁸ «Սիրավուխ» պատումում, որը ասել է շատախի հայ բանահավաք և բանասաց, հանգուցյալ Շահեն Կուժիկյանը, հանդիպում ենք հետևյալ էպիդոդին. հակառակ թագավորի այն հրամանի, որ պետք է իր որդի Սիրավուխին սպանել, Գևույի հայրը՝ Գուդարզն ասում է. «Մենք քուրդ ենք, թագավորի տղային չենք կարող սպանել: Զետաքրթիր է նաև այն հանգամանքը, որ քրդական նույնանուն տոհմի մասին (զուգարդյա) հիշատակում է նաև 18-րդ դարի քուրդ պոետ Հարիս Բիթլիսին իր «Էլյի և Մեցնուն» պոեմում. — Харис Битлиси, Лейли и Меджун. Предисловие и примеч. М. Б. Руденко, М., 1965, стр. 65. Г. Б. Акопов, Некоторые аспекты проблемы происхождения курдов в свете данных древнеиранской мифологии, см. «Востоковедческий сборник», II, Ереван, 1964, стр. 344—345.

¹⁹ В. Ф. Миллер. Отголоски Ростомиады у курдов. «Этнографическое обозрение», 1891, т. 9, стр. 201—202.

Համանուն հերոսի շուրջը ստեղծված այս տարբերակները արտահայտում են քուրդ նահապետական ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը՝ ապրելակերպը, կենցաղը, ցեղամիջյան կոիվները, դասակարգային հակադրությունները, ժողովրդի առաջավոր գաղափարախոսությունը:

«Ռոստամն Զալի» քրդական պատումների մեջ հիմնական թեման հերոսականությունն է: Ողջ էպոսը խմորված է ասպետական, հերոսական սխրագործություններով: Նրա փահլևանները՝ Զալը, Ռոստամը, Գևոն, Բեժանը, Բրզոն և ուրիշներ վեհանձն են, հպարտ, իրենց ուժերի վրա վստահ: Նրանք ամենուրեք հիշեցնում են, որ «իրանք պատկանում են Զալե զարմի դաստային» տոհմին: Այդ զարմի անունը, պատիվն ավելի բարձր են դասում, քան իրենց անձը: Անօգնականներին պաշտպանելու համար պատրաստ են մենամարտելու նույնիսկ ամենաուժեղների հետ: էպոսում շոշափված մյուս կարևոր հարցը հայրենասիրությունն է, որն արտահայտվում է Իրանը, նրա մեջ մտնող Զաբլ բերդը ու նրա շրջակայքը պաշտպանելու, ավերածություններ առաջ բերող թուրանյան հորդանքերին ոչնչացնելու գործում:

Աշխատավոր ժողովրդի նկատմամբ ունեցած նվիրվածությամբ աչքի են ընկնում Զալի գերդաստանի բոլոր անդամները և նրա կողմնակից տոհմերը: Նրանք իրենց գործունեությամբ ու վարվելակերպով արտահայտում են աշխատավոր ժողովրդի ցանկությունները, իղձը և դրանով էլ էպոսը վայելում է մեծ ժողովրդականություն:

«Ռոստամն Զալ» էպոսը ոգևորության անսպառ աղբյուր է եղել, սերունդների դաստիարակման անզուգական հուշարձան: Նրա հերոսները՝ Զալը, Ռոստամը, Գևոն, Զոհրաբը, Սիավուխը, Բեջանը և ուրիշները անմահացի են, հար և նման քրդական մյուս վիպերգերի հերոսների՝ Մամեի, Ղարաթափինի, Սիաբանդի, Կառու Քուլուկ եղբայրների, Խանն Շանկգեռնի և այլնի:

«Ռոստամն Զալի» քրդական պատումների տղամարդ հերոսների հետ, թեև քանակով փոքրաթիվ, հանդես են գալիս նաև կանայք՝ աղջիկներ, մայրեր: Նրանք աչքի են ընկնում ոչ միայն իրենց բարոյականությամբ, իդեալական ասպետական սիրով, նվիրվածությամբ՝ հարազատների հանդեպ, այլև իրենց քաջագործություններով և այդ ասպարեզում շեն զիշում Զալի զարմի ոչ մի տղամարդու, փահլևանի: Ավելին, նրանք նույնիսկ հաղթում են քաջակորով Զալին (Ռուզավան), անխոցելի հսկա, փղամարմին

Ռոստամին (իր աղջիկը) և ուրիշներին: Մեր գրառած պատումներին մեկը կրում է «Ռուզավա» խորագիրը: Այստեղ գլխավոր հերոսը Ռուզավան է, իսկ Զալը և նրա գերդաստանի մյուս փառլեանները երկրորդական տեղ են գրավում: Քաջակորով Ռուզավան Զալի հետ գոտեմարտելիս կարող էր նրան հաղթել, զետին տալու, բայց ղգավով ախույանի ֆիզիկական ահռելի ուժը, համարձակությունը, անվաստությունը, գիտակցաբար անձնատուր է լինում և նոր միայն հայտնում, որ ինքը կին է ու համաձայնվում է նրա հետ ամուսնանալ, որպեսզի նրանից ունենա նույնպիսի քաջատոհմիկ արու ժառանգ: Թվում է, թե սա մի հուշ է այն հռավոր անցյալից, երբ տիրում էր մայրիշխանությունը և երբ մայրկիսն ինքն էր վճռում, թե ով է իրեն արժանի:

Կնոջ խելքի, հնարամտության մասին է խոսում նաև հետևյալ ընդորոշ էպիզոդը: Ռոստամը իր որդուն՝ Զոհրաբին շճանաչելով սպանում է և հիասթափվում է աշխարհից, մատնվում է մեկուսացման և միայն մի պառավ կնոջ՝ կյանքի նկատմամբ ունեցած առողջ դատողության շնորհիվ փրկվում է հոգեկան չափազանց ծանր խանգարումից: Այնտեղ ասվում է, որ մի պառավ կին ամեն առավոտ սև թաղիք է տանում հեռու գտնվող առվակի ջրով լվանում: Տնից խռոված Ռոստամը նկատում է պառավին, խղճում նրան, ու ասում.

—Այ, մայրիկ, բավական չէ՞ էդ թաղիքը լվանաս:

—Թաղիքը սև է, ուզում եմ սպիտակեցնել,—ասում է պառավը:

—Բա սևը սպիտակ կդառնա՞,—ղարմացած հարցնում է Ռոստամը:

—Եթե սևը սպիտակ չի դառնա, հապա մեռածը կկենդանանա՞, որ դու քեզ դրել ես այդ վիճակի մեջ,—ասում է պառավը:

Նոր միայն Ռոստամը սթափվում է և վերադառնում հայրական տուն:

«Ռոստամի Զալի» մեր գրի առած քրդական պատումներում կանայք նման չեն մահմեդական որոշ ժողովուրդների անօգնական կանանց: Սրանք աչքի են ընկնում իրենց ազատասիրտությամբ, համարձակությամբ, սխրանքներով: Նրանք ամենուրեք հաղթանակով են դուրս գալիս, գլխատում նույնիսկ այնպիսի յոթգլխանի դեերի, որոնցից սարսափում է անգամ ինքը՝ հսկաների հսկա Ռոստամը, այդպիսիներից է նրա աղջիկը: Էպոսի կանայք մեծ հարգանք են վայելում իրենց շրջապատում: Իրանի շահից խռոված Ռոստամը եր-

բեք շէր համաձայնվի իրանը թշնամուց փրկել, եթե շահագեր իրեն դիմող կանանց խնդրանքը:

Ակամայից մտաբերում ենք քրդերի մեջ մինչև այժմ գոյութիւն ունեցող սովորույթը, ըստ որի տղամարդկանց միջև տեղի ունեցող կոիվը դադարեցվում է, երբ որպէս հաշտարար հանդես է գալիս կինը:

«Ռոստամն Զալ» էպոսի հերոսները արտահայտելով աշխատավոր ժողովրդի ձգտումներն ու ակնկալութիւնները, հիշեցնում են հայկական «Սասունցի Դավիթ» էպոսի հերոսներին: Քրդական բանահյուսութեան մեջ այդ երկու էպոսների հերոսների նույնեցման, հոգեհարազատութեան մասին, ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը գրել է. «Քուրդ աշխատավոր մասսան երկար դարեր ապրելով հայ գյուղացու հարևանութեան մեջ՝ յուրացրել է և հարազատ դարձրել «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպը: Նա էլ է պատմում ու ասում «Սասնա տունը» և ֆոլկլորի գոյացման ոգուն համապատասխան միաձուլում տարբեր ծագում ունեցող վեպերը: Քուրդ վերսիայումն էլ տեղի են ունենում նույն տեղայանացման ու ազգայնացման պրոցեսը, ինչ-որ նկատեցինք հայ-իրանական վեպի պատումներում: Այդ վերսիաներում Դավիթը սասունցի լինելով հանդերձ՝ ազգութեամբ քուրդ է, նրա հոր՝ Մհերի անունը քրդերեն Զալ է. „Р’остэм кӊр’е Зал, Зал кӊр’е Кал. Кал кӊр’е Сасум Кр-ал“ (Ռոստամ՝ որդի Զալի, Զալ՝ որդի Կալի, Կալ՝ որդի Սասուն-Կալի, — ալսպես է պատմում կառկառցի Պուգոն, որը, հարկավ, լսած ու սորված պիտի լինի քուրդ ասացողից»²⁰:

Իր համամարդկային նպատակադրումներով «Ռոստամն Զալի» քրդական տարբերակները միաժամանակ մեզ հիշեցնում են ադրբեջանական «Քյոռոզլի» էպոսի պատումները, որոնք նույնպէս լայն տարածում են գտել արևելյան գրեթե բոլոր ժողովուրդների մոտ, դարձել նրանց ամենասիրված ստեղծագործութիւններից մեկը²¹:

Այդ էպոսներն իրար համալրել և իրենց տարբերակներով դարեր շարունակ քայլել են տարբեր դավանանքների ու կրոնների

²⁰ Կ. Մելիք-Օհանջանյան, Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-նամեում» ու հայ մատենագրութեան մեջ, տե՛ս «Ֆիրդուսի» ժողովածու, Երևան, 1934, էջ 115—116:

²¹ 2. Զեդի, Քյոռոզլի էպոսի քրդական պատումները, Երևան, 1953, էջ 10—11:

պատկանող ու տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների հետ: արտահայտելով նրանց առաջավոր ձգտումները, ժողովուրդների բարեկամության վսեմ գաղափարը:

«Ռոստամե Զալ» էպոսի քրդական պատումները աչքի են ընկնում գեղարվեստական բարձր արվեստով: էպոսի ճյուղերի հարուստ և գրավիչ բովանդակությունը, գեղարվեստական կուռ կառուցվածքը, գեղեցիկ պատկերները, համեմատությունները, թեալոր արտահայտությունները, էպիտետները, հարուստ բառապաշարը, պարզ և անպաճույճ ոճը, առածները, ասացվածքները, լեզվական տարբեր դարձվածքները, ժամանակի հետ անընդհատ փոփոխվում են, չկորցնելով իրենց ազգային ինքնատիպությունը:

Ըստ ձևի «Ռոստամե Զալը», ինչպես և մյուս քրդական էպիկական ստեղծագործությունները, արձակ է, շափածո հատվածներով: Չափածոն, որ հաճախ երգով է ասվում, ունի ազատ կամ խառը տաղաչափություն, որոնց կազմավորման կարևոր հանգամանքը յուրաքանչյուր տողի ինքնուրույն շարահյուսական միավոր լինելն է: Տողերը, ինչպես նաև տները, իրարից անջատվում են մտքի ավարտով և համապատասխան դադարով: Երգվող հատվածները ասերգային բնույթի են, որոնց մեջ առաջին պլանի վրա է գտնվում խոսքը, իսկ մեղեդին հանդես է գալիս որպես ասելու, պատմելու միջոց, որը բնորոշ է քրդական լայնաշունչ երգերին՝ վիպերգերին և սիրային երգերին, ի տարբերություն պարերգերի, աշխատանքային և մանկական երգերի, որոնք մեծ մասամբ ունեն կանոնավոր տաղաչափություն և մեղեդիի պարբերական զարգացում:

«Ռոստամե Զալ» էպոսը, ինչպես նման այլ ստեղծագործությունները, ունեն կատարման յուրահատուկ ոճ: Դրանք անմիջականորեն են ընկալվում, մանավանդ, երբ վարպետ բանասացի կողմից են ասվում: Ունկնդիրը այդպիսի դեպքերում մի պահ իրեն մոռանում է, նայում պատմողի ձեռքերի շարժումներին, կրակ ցայտող աչքերին, դիմագծերի անհանգիստ շարժումներին, լսում է նրա մերթ մեղմ ու հանգիստ, մերթ դողացող ու արագ, մերթ բարձր ու ահարկու ելևէջներով ձայնը, մտնում է ինչ-որ պատերազմական ասպետական ռազմադաշտ, կարծես տեսնում է փահլեան Ռոստամին՝ Ռախշե Բալաքին հեծած, լսում է ահ ու սարսափ տարածող գուրգերի դղրդյունը, Ռոստամի ահեղադղորդ

ձայնը, որի ուժից անգամ «Օվկիանոսի բնակիչներն էլ դուրս են գալիս ցամաք», լսում է Ռախշի Բալաքի աշխարհասասան դուփյունը, անհամբեր ու սրտատրուփ սպասում հաջորդ հատվածներին և այդպես մինչև վեպի վերջը:

Ժողովրդի վառ երևակայությունը այս էպոսում ստեղծել է բազմաթիվ գեղեցիկ և տպավորիչ համեմատություններ, շափազանցություններ, որոնք պատումների անբաժան և օրգանական մասն են կազմում: Այսպես, «Ռոստամը մի սար է,—ասվում է մի պատումում,—նրա կուրծքն Իրանի պատնեշն է»: Հնանի և Ռոստամի միջև տեղի ունեցած կռիվը նմանեցվում է երկու ահռելի օվկիանոսների բախմանը: Նրանցից յուրաքանչյուրը համեմատվում է յոթ գլխանի կետ ձկների հետ, որոնք իրենց գլուխները հանել են օվկիանոսի խորքից և կռվի բռնվել: Նրանց կռիվն այնքան ահարկու է, որ ոմանք զարմանում են. թե «ինչպես պատահեց, որ նրանց կռվի ժամանակ աշխարհն իր տեղում մնաց, տեղահան չարվեց»: Կամ՝ Իրանի և Թուրանի կռվի ժամանակ «երկիրը պատվեց դարձավ վից շերտ, երկինքը՝ ութ», «թագավորը լաց եղավ, անձրևի երակների շափ նա արցունք թափեց»: Մի այլ տեղում կարդում ենք, թե՝ Ռոստամը դուրս եկավ, սկսեց գողգոռալ, չորս կողմը ձայն տալ: Մեծ ձորը նրա ձայնից թնդաց, ձորի ժայռերը, քարակույտերը գլորվեցին ցած ու մեծ գետը պղտորվեց: Ներքևի գյուղերի բնակիչները, որոնք այդ ջրից խմում էին, միմյանց ասում էին, թե «այս ախպեր, մեր ջուրը միշտ դուլալ է եղել, անձրև էլ չկա, էս ի՞նչ պատահեց, որ էսպես պղտորվեց»:

Կամ՝ Թուրանից փախչող Սիավուշի կինը՝ Ֆրանգիսը, իր հետ եկող Գևոյին ասում է. «Իմ հոր զորքը գալիս է. նրանց ոչ թիվ կա և ոչ էլ վերջ, ավելի շատ են, քան երկնքի աստղերը, ավելի շատ են, քան ծառերի տերևները, եթե դու կրակ դառնաս, նրանք բամբակ, դու նրանց չես կարող վառել, եթե դու լինես գարնան անձրև, դարձյալ չես կարող նրանց թրջել»: Գևոն ասում է. «Սո քո քուրդն եմ, դու ինչո՞ւ ես մտածում, վեր կկենամ նրանց կքշեմ մինչև իրենց քաղաքը»:

էպոսում գործող մի քանի հերոսներ հայտնի են իրենց մականուններով, որոնք փոխարինում են էպիտետներին: Ընդգծելու համար, որ Ռոստամը ուժեղ, ազդու և թշնամիների նկատմամբ սարսափ առաջացնող մորից է ծնվել, որի անունը Գեւափրուզա էր, ժողովրդական բանասացը վերջինիս արտաքինը նմանեցնում է վայրի գաղանի և բացատրում է, թե ինչպես մի օր նա գնացել

է անտառ, ծառեր կտրել, պատրաստի ցախը դրել պարանի վրա, այդ ժամանակ ծառի մի մեծ ճյուղ նրա դեմքին է կպել, երեսի վրա վերք է առաջացել և այդ վերքի տեղն այդպես էլ մնացել է: Դրա համար էլ նրա անունը Ռուդավան (Р'удѣ'вѣ) դրեցին, որը նշանակում է դաղանագեմք: Մի ուրիշ օրինակ, Գևոն ունենալով արջի կերպարանք, կոչվում է նաև Tewoe hvpi—Արջ Գևո: Մի պատումում ասվում է. «Գուդարզի տղան՝ Գևոն, իսկական արջի նման է, մարդ նրան տեսնելիս՝ վախից տրտաճաք է լինում»:

Գեղարվեստական հնարանքներից են երազն ու քունը: Դրանցից թե մեկի, թե մյուսի հետեանքով փոխվում է ստեղծագործության ողջ ընթացքը: Քնելը՝ այն էլ յոթ օր ու յոթ գիշեր, ոչ միայն հանգստի, ուժ հավաքելու, այլև ամենագործող բուժիչ միջոցն է կովող և վիրավոր Ռոստամի ու նրա թշնամիների համար: Այդ միջոցին ամոքվում են նրանց նույնիսկ մահացու և խոր վերքերը. և ապա նոր ուժեր հավաքելով նորից նետվում են կովի դաշտ: Իսկ երազի միջոցով, ինչպես կարելի է նկատել նաև ուրիշ ժողովուրդների բանահյուսական նմուշներում, կանխագուշակվում է, թե ինչ է լինելու և կամ իմացվում է, թե հերոսն ինչ վիճակի մեջ է: Հիշենք, օրինակ, Ռոստամի այն երազը, որով իմացվում է, թե Սիավուխի որդին՝ Խոսրովն, ինչպիսի վիճակի մեջ է և թե Սիավուխի հետ ինչ է պատահել Թուրանում: Երազն արագահաս միջոց է, որով հերոսները ղեկավարվում են:

Էպոսում կարևոր տեղ են գրավում գուշակությունները և կախարդանքը: Դրանք հաճախ փոխում են հերոսների նպատակադրումները, ծրագրած միջոցառումները, առաջ են բերում հետաքրքիր իրավիճակներ, գեղեցիկ մտապատկերներ և ներշնչում առանձնակի ջերմություն ու հմայք:

«Ռոստամն Զալ» էպոսում մեծ տեղ են գրավում բնության և Ռախշն Բալաթի հետ առնչվող գեղեցիկ, տպավորիչ համեմատությունները: Այդ պատկերներն ինքնանպատակ չեն, իհարկե, այլ պատումների օրգանական, անբաժանելի մասն են: Ռոստամն Զալը ժողովրդական հերոս է, նա ժողովրդի բարի կամքի համաձայն պիտի հաղթի իր երկիրը ներխուժած դեերին, թշնամիներին: Որպեսզի նա հաղթի «անթիվ ու անհաշիվ ախոյաններին», նրա ուժը պիտի կրկնապատկվի ու եռապատկվի, նրա նիզակը, գուրզը պիտի դիպուկ ու խորտակիչ լինեն, իսկ Ռախշն Բալաթը նժույգը մտածող, խոսող պիտի լինի, ինչպես իր տերը՝ Ռոստամը: Նրա «ափանջները» պիտի հասնեն երկինք, որպեսզի ամեն ինչ լսեն,

գլուխը հասնի ամպերին, որպեսզի «ամենուրեք տեսնի», ինքնաթիռի նման օդում սավառնի, որպեսզի ամենակարճ ճանապարհով հասնի իր օգնությունը սպասող սիրելի տիրոջը:

Արդյո՞ք «Ռոստամի Զալի» պատումները առանց ջրային ծագում ունեցող այդ արտակարգ ձիու կարո՞ղ էին ստեղծվել: Այդ կենդանին «Ռոստամի Զալի» էպոսի կենտրոնական ֆիգուրան է. նա Ռոստամի հետ է ամենադժվար տեղերում, զգայուն է, բանիմաց, խորհրդատու, հսկայական ուժ ու մեծություն ունի, կովող է, հաղթող:

Եվ այսպես, կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, ցույց տալու թե «Ռոստամի Զալի» քրդական պատումներում ինչպիսի բնական և արտահայտիչ ձևերով են հանդես գալիս գեղարվեստական տարբեր հնարանքները, գեղեցիկ համեմատությունները, հիպերբոլիկ նկարագրությունները և այլն:

«Ռոստամի Զալի» տարբերակները դարեր շարունակ ժողովրդի հետ են ընթացել, միշտ թարմանալով և նոր ձյուղավորումներ տալով, մշակվելով և վերափոխվելով: Եվ այժմ ինչպես առանց «Դըմդըմի», «Կառ ու Քուլուկի» և այլ հայտնի հերոսական վիպերգերի, այնպես էլ առանց այս էպոսի տարբերակների չի կարելի լրիվ պատկերացնել քրդական ժողովրդական հերոսապատումը:

Էպոսի տարբերակներում պահպանված են հեթանոսական շրջանից հկած սովորությունները: Մինչև այժմ էլ, ըստ բնապաշտ եզիդի քրդերի հավատալիքների՝ Ռոստամը Դաստան Զալե Զարի որդին է, իսկ վերջինիս զարմը, տոհմը համարվում է երկնային՝ դյուցազնական օջախ՝ գերդաստան, սերելով յոթը միֆական ընտանիքից: Նրա զարմի անդամները անմահ են, երկնային ուժ ու կարողություն ունեն և որպես փահլեասներ մինչև այսօր էլ պայքարում են շարիքի և անարդարության դեմ, պաշտպանում իրենց երկիրը, օգնում թշվառներին, չքավորներին, օտարահալած փախստականներին, դառնալով նույնիսկ պաշտամունքի առարկա: Բնորոշ է եզիդական հետևյալ ասացվածքը, թե «Hfьp'e wan—Hfьp'ьh, dōae wan-dōa» (նրանց անեծքները՝ անեծք են, նրանց աղոթքները՝ աղոթք), ասել է, թե՝ նրանց անեծքներն ու աղոթքները կատարվում են: Մինչև այժմ հարատևող որոշ առասպելներում, դիցաբանական ստեղծագործություններում անել վիճակում գտնվող, հրաշքի սպասող հերոսն իր գիտցած մի շարք երկնային դյուցազնների հետ թվարկում է նաև Զալի օջախի փահլեասները:

րին՝ Ռոստամին և այլոց, թե՛ «Йа мала Зале, тō һәwара мә бей» «Йа Р'остәме Зал, тō һәwара мын бей» — (ով Զալի օջախ, դու մեզ օգնության հասնես, կամ ով Ռոստամ, դու ինձ (կամ մեզ) օգնության հասնես)։ Զալը և մասնավորապես Ռոստամը քրդական հերիաթների գլխավոր հերոսներն են, փրկարարնե՛ր, ազատարարները, բարի դորժ կատարողները։ Ահա թե ինչո՞ւ Զալի օջախը սրբության և անգամ երգման անխախտ օրենք պիտի համարվի քուրդ ժողովրդի եզիդի հատվածի մեջ։

Սակայն ոչ միայն Զալի դարմի փահլևաններ են այդպես, այլև նրանց դարմի հետ սերտ կապ ունեցող սրբացած և պաշտամունքի առարկա դարձած հեթանոսական շրջանին պատկանող լեգենդար Դәйре Симьը՝. Տայրե Սիմըռը՝ սիրամարգ և կամ սիրամուրդ թռչունը, հավքը, որը «Եահնամեում» հիշվում է սիմուրդ անունով։ Վերջինս Զալի ընտանիքի խորհրդատուն է, օգնողն ու բուժողը։ Նա խոսում է, իր մեջքին նստած Ռոստամին տանում է ցանկացած հեռավոր վայրը, երկիրը, թռիչքներով վարժեցնում Ռոստամի ձիուն՝ Ռախշե Բալաքին և այլն։

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ այդ առասպելական թռչունը մտել է քուրդ ժողովրդի կենցաղի մեջ և հաճախ հիշատակվում է նաև բանահյուսական այլևայլ ստեղծագործություններում։ Մինչև այժմ էլ սովորույթ է դարձել խնդրանքի այսպիսի դարձվածք, թեбьди хатьре Դәйре Симьը՝- (ի սեր սիրամարգ թռչունի կամ ի հարգանս սիրամարգ հավքի) այս բանն այսպես արա՛ւ ի դեպ, այս հավքը՝ սիմուրդը—սիմըռը (սիրամարգը) հիշեցնում է առասպելական թառուլ طاسو թռչունին, որին եզիդիները պաշտում ու հավատում են²², նրա ձուլածո արձանի առաջ պարում են, երգում և մոտը եղած ձուլված բաժակից ջուր շաղ տալիս իրար վրա, կատարում են նվիրատվություններ, զոհաբերություններ²³։ (Мәләки Тауьс—Մալաքի Թաուլ) Թաուլի անուն տալը եզիդիների կրոնական մեծագույն երդումներից է։ Որե՛կ եզիդության իսկությունը ցույց տալու համար ասում են Мәләки Тауьс (Մա-

²² E. B. Soane, To Mesopotamia and Kurdistan in disguise, London, 1926, p. 100; E. Вейденбаум, Путеводитель по Кавказу, Тифлис, 1888, стр. 68, 74, 76—77; Чжисмбэ, Сокровища мельк тауза, роман, М. Л., 1928.

²³ Մալաքի Թաուլի արձանն օտարներին ցույց չի տրվում, դա Հարավային Քուրդիստանի Մինչուրի շրջանի եզիդի դավանների մոտ է գտնվում։ Նրանք եզիդական բնակավայրեր այցելելիս այդ արձանը վերցնում են իրենց հետ, ման ածում, հավաքում տարեկան հոգևորական նվիրատվությունները։

լաքի Թաուզ), կամ ուղղակի Тауысе (Թաուզե), դա արդեն բավական է, որ առարկութիւնը վերջ տրվի:

Պաշտամունքի առարկա է դարձել նաև Աշկարի Դեմզարը— Ռախշե Բալաքը՝ դուցազն Ռոստամի համատարիմ, անմահ և իր մեծութեամբ բերդի նմանվող աներևույթ ձին: Ըստ ավանդութեան նա նույնպես խոսում է, հասկացող է, դիտակից, օգուտ սլացող, գետնի վրա արագավազ (ինչպես Խըզըրնաբիի՝ սուրբ Սարգսի աներևույթ ձին), մխրճվում է ամպերի և կամ ծովերի խորքերում: Հրաշք ձիու ալդպիսի հատկութիւնները հանդես են գալիս նաև ժողովրդական բանահյուսութեան մյուս նմուշներում, հեքիաթներում, ավանդութիւններում և այլն:

Այսպիսով, Мала Зале Զալի գերդաստանը, օջախը, զարմը և նրա հետ կապված սիրամարգ թռչունն ու Ռախշե Բալաք նժույգը «Ռոստամե Զալ» էպոսի մեջ միաժամանակ իրենց իսկ նպատակասլաց գործունեությամբ բացահայտում են եզիդի քրդերի հնագույն տեղական հավատալիքների ակնհայտ հետքերը²⁴:

«Ռոստամե Զալի» քրդական տարբերակներում արտահայտված են նաև բարու և չարի, լույսի և խավարի գաղափարները: Բոլոր նրանք, ովքեր հնագույն ժամանակներում չեն հետևել բնապաշտութեան և երկաստվածութեան, այն է՝ զրադաշտական հավատալիքների, որոնց հետևել են մարերը՝ քրդերը և այժմ էլ հետևում են եզիդի քրդերը, համարվել են անհավատներ, չարեր, դեմեր, խավարամուլներ, անգամ քաֆուրներ: Հետագայում, երբ քրդերի մեծամասնությունն ընդունել է մահմեդականություն, «քաֆուր» են անվանել այն ցեղերին ու ժողովուրդներին, որոնք չեն ընդունել նոր կրոնը, և Ռոստամը այս անգամ հանդես է եկել մահմեդական կրոն տարածողի անվան տակ, մի բան, որը հանդիպում է մեր որոշ տարբերակներում:

Զնայած դրան, երբ քննութեան ենթադնում էպոսի այս կամ այն տարբերակը, իսկույն երևում է հինը՝ նախամահմեդական կրոնի հնագույն վերապրուկները: Եվ դա բնական է ու հասկանալի, որովհետև, ինչպես ակադեմիկոս Մ. Աբեղյանն է գրում, «Արդարեւ, հին դուցազնական առասպելները ամենայն ժողովրդի մեջ ևս շատ դժվար են մոռացվում, դրանք երկար դարեր ապրում են ժողովրդի բերանում, այսպես ասած՝ միշտ հին պատմա-

²⁴ Մտքը գրում է. «Առայժմ պարզ է մի բան,—եզիդիականության մեջ մենք ունենք հնագույն տեղական կրոնական ուսմունքի վերապրուկ»։ „Еще о саяре“ „Челеби“, Пб., 1911, стр. 40—41.

կան հագուստի տեղը նորը հագնելու... Դյուցազնական առասպելները, որոնք հիմք ունեն հին հեթանոսական հավատալիքները, միշտ նորոգվելով հարուստ են առնում»²⁵:

«Ռոստամի Զալի» տարբերակները մինչև այժմ էլ մեծ մասամբ պատմում են եղիդի քրդերի ժառանգական և անգրագետ կրոնավորները, որոնք սերնդե-սերունդ ավանդելով այդ տարբերակները՝ դասել են իրենց հնագույն առասպելների և դյուցազներգությունների շարքը: Այսպես, Հայկական ՍՍՀ Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի բնակիչներ՝ հայտնի Փիր Ուուբը և շինյա Քալաշը գիտեին էպոսի գրեթե բոլոր տարբերակները՝ Ռոստամի մանկությունից սկսած մինչև նրա վախճանը և պատմելով դրանք շաբաթներով դբաղեցրել են իրենց ունկնդիրներին:

Մառը գրում է. «Որ միշավայրում հեթանոսությունն ավելի համառ է դիմանում, այնտեղ էլ ավելի բարձր է կանգնած եղել երգը...»: «Քրդերի երգերն իրենց հիմնական նորմաներով և մոտիվներով (եղանակներով) մի հարստություն է, որ նրանք ժառանգել են հեթանոսությունից, այն հեթանոսական կրոնից, որը մի ժամանակ (երբեմն) ներառում էր իր հետևորդների թվի մեջ նաև բազմաթիվ քրդական ցեղեր...»²⁶:

Ահա թե ինչու այդ բանահյուսությունը սիրելի պիտի լիներ «քրիստոնյա հայերի» և «մուսուլման տաճիկների» համար: Նրա «ոչ կրոնական երգերը», որոնք հորինված են լինչպես սիրային, այնպես էլ հերոսական սյուժեով», հերոսական և սիրային վիպերգերն ու մյուս ստեղծագործությունները, ինչպես հայտնի է, պատվավոր տեղ են գտել թե՛ հայ, թե՛ ասորի և թե՛ մուսուլման ժողովուրդների բանահյուսությունների մեջ: Ժնձ թվում է,—չատ նրբին նկատել է Մառը,—որ քրդերի ժողովրդական բանահյուսական հարստությունը սերտորեն կապված է այն ազգային առավելությունների հետ, որ նրանք ունեն հարևանների՝ մուսուլման տաճիկների ու քրիստոնյա հայերի նկատմամբ: Այս ժողովուրդները հիմնովին դավաճանել են վաղեմի ժողովրդական կրոնական ավանդություններին (հեթանոսությանը—Հ. Ջ.): Քանի դեռ նրանք ըստ լեզվի քուրդ էին մնում, պարսիկների նման լիովին չէին կտրվում ժողովրդական կրոնական սովորություններից, անգամ այն ժամանակ, երբ ընդունում էին իսլամը»²⁷:

²⁵ Մ. Արեղյան, Հայ ժողովրդի վիպեր, արտատպված «Ազգագրական հանդեսի» 1906—1908 թթ. գրքերից, Քիֆլիս, 1911, էջ 181:

²⁶ Н. Март, Еще о слове «челеби», Пб., 1911, стр. 31.

²⁷ Նույն տեղում, էջ 30:

Դրանով էլ պետք է բացատրել քրդական բանահյուսության հարազատությունը դրացի քրիստոնյա և մահմեդական ժողովուրդներին, ինչպես նաև դրա որոշ նմուշների փոխանցումը նրանց մոտ: Թվում է, թե այդ նմուշներից մեկն էլ պետք է համարել «Ռոստամի Զալի» քրդական տարբերակները, որոնք, ինչպես կտեսնենք, քրդական միջավայրից փոխանցվել են լեզվով և կրոնով տարբեր այդ ժողովուրդների բանահյուսությունների մեջ: Օրինակ, այդ կարգի փոխանցում հետագայում նկատվում է դրացի հայ ժողովրդի բանահյուսության մեջ՝ դասվելով հայ իրականության մեջ գոյություն ունեցող «Ռոստամ Զալին» վերաբերող տարբերակների շարքը: Այդպիսի նյութ մեզ տալիս է «էմինյան ազգագրական ժողովածուի»²⁵ ն հատորը, որը կոչվում է «Հայ-քրդական վեպ»: Այս ժողովածուի մեջ, բացի մի շարք այլ քրդական բանահյուսական նյութերից, տեղ են գտել նաև «Ռոստամի Զալի» չորս պատում՝ «Ռոստամ ու Զալ» (էջ 3—13), «Ռոստամ և Ադամբօի ու Դյուրո» (էջ 14—24), «Ընդհատմի Զալ» (էջ 25—39) և «Բեճան» (էջ 40—53): Ներկա դիրքը,—գրում է Գր. Խալաթյանը խմբագրության կողմից,—«էմինյան ազգագրական ժողովածուի» հինգերորդ հատորն է կազմում ...բացի բուն քրդականից՝ նորա մեջ կան և ընդհանուր իրանական վիպական եղանակներ, որ հետաքրքրական արձագանք են Ֆիրդուսու «Շահնամեի» և կամ գուցե վարիանտներ պարսից վեպի՝ յուր ավելի հնագույն ձևերով» (էջ 6):

Այստեղ քրդակոն և հայկական բանահյուսության փոխհարաբերության մասին²⁶ չէ խոսքը, որ իր հերթին շատ հետաքրքրական է, այլ խոսքը վերաբերում է «Ռոստամի Զալի» քրդական պատումների փոխանցմանը հայկական ֆոլկլորի մեջ²⁷: Այս հարցը հիմնավորվում է նաև հայկական ու քրդական բանահյուսությունը գրի առնող և հրատարակող հանգույցայ Ս. Հայկունու գրառումներով: Նա գրել է, որ «Ընդհատմի Զալ» և «Բեճան» պատումները ասվել են՝ քաջբերունյաց Արծկեի Առնճկույս գյուղի բարբառով. «Ասած է Դավո Մուխսի Հարությունյան, լսած է փոքր ժամանակին մի հայե, սակայն ընդհանրապես

²⁵ Հ. Զեյի, Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ, Երևան, 1965 թ.:

²⁶ Բ. Խալաթյան, Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ, Պարիս, 1901, էջ 9: Թորոս Ազատյան, Ռոստամ Զալի մասին, տե՛ս Ե. Զարենցի անվան զրականության և արվեստի թանգարանի Թորոս Ազատյանի արխիվի 3-րդ բաժնի № 88 ձեռագիրը:

հայեր օթախներու մեջ կպատմեն, որպես և բազմաթիվ քրդական վեպեր: Թեև քրդական վեպ է, քրդերը անշափ չեն հետևիր այլ ընդհանրապես հայեր և քուրդ գնչուներն ևս կպատմեն»³⁰, իսկ մյուս երկու պատումները՝ «Ռոստամ և Ատամբեփի ու Դյուրո» և «Ռոստամ ու Զալը» մոկաց բարբառով: Առաջինը «պատմած է նորտուղա Սիբունս գյուղացի Վարդան Մարտիրոսյան... Սա լսած է յուր երկրի մեջ հայ ասողներեն, կասե թե քրդերեն շատ լավ կասեն հայեր և երգերով»³¹, իսկ «Ռոստամ ու Զալը» պատմած է ժողովարար Պետրոս Վերտոյան խոսքովի թոռն... Սա սովորած է Չոլո անուն մեկեն. որը նույնպես ժողովարար է: Պետրոս գիտե բազմաթիվ հեթաթներ և քրդական վեպեր»³²:

Հատկապես այս վերջին երկու պատումներում կան քրդական դարձվածքներ, նախադասություններ, անգամ չափածո հատվածներ, որոնք համեմատաբար երկար են ապրում, քիչ են փոխվում, քան արձակը: Ս. Հայկունու գրի առած «Ռոստամ ու Զալ» պատումը, չնայած արձակ ձևով է պատմվել, բայց վերջանում է հետևյալ քրդերեն չափածո քառյակով՝

հәм ч'нар, հәм ч'г'ал, հәм	Թե չինարը, թե ճղալը և թե
знар—	ժայրը՝
чебу Р'остәме кōр'е Зал—	Ինչպես էր Ռոստամի Զալը—
ә'мър кър сесәд шест шәш	Կյանք վարեց երեք հարյուր
сал—	վաթսուն և վեց տարի,
хеж пьч'укә, т'фәл—	Դեռ փոքր է, ինչպես երեխա
Дае һәмбез кър, бьрә мал—	Մայրը գրկեց, տարավ տուն» ³³ :

«Ռոստամ Զալի» հայկական վերսիսան,—գրում է ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը,—կազմված է քուրդ բանահյուսության հերոսական վեպի միջնորդությունից և ազդեցությունից (հայ ասացողների մեծ մասը այդ վեպը պատմում—«ասում» է հայերեն և քրդերեն»³⁴): «Ռոստամ Զալի» քրդական պատումները

³⁰ Լմինյան ազգագրական ժողովածու, Ե հատոր, Մոսկվա—Վաղարշապատ, 1904, էջ 25:

³¹ Նույն տեղում, էջ 14:

³² Նույն տեղում, էջ 3:

³³ Նույն տեղում, էջ 13, թարգմ. Ս. Հայկունու:

³⁴ Կ. Մելիք-Օհանջանյան, Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամում» ու հայ մատենագրության մեջ, «Ֆիրդուսի» (ժողովածու), Երևան, 1934, էջ 162:

տարածվել են նաև հարևան ասորիներին մեջ: Այդ մեզ հայտնել է հանգուցյալ քրդագետ, ծագումով ասորի Խսահակ Մարոգուլովը: Քրդական միջավայրից «Ռոստամն Զալի» տարբերակները փոխանցվել են նաև արաբների մեջ³⁵ և այլն:

Այս նկատառումներով բացառված չէ, որ «Ռոստամն Զալի» քրդական տարբերակները կարող էին փոխանցված լինել իրանական ժողովուրդների, այդ թվում պարսիկների բանահյուսության մեջ ևս: Նման հարցադրման կապակցությամբ ուշադրության արժանի է Կ. Մելիք-Օհանջանյանի հետևյալ դիտողությունը, թե «Ռոստամ Զալի» հայ պատումների մեծ մասի անունները (քրդական արտասանությամբ) կրկնվում են Իրանի էպոսների մեջ³⁶:

Այժմ համառոտակի անդրադառնանք «Ռոստամն Զալի» քրդական պատումների և «Շահնամնի» աղբյուրակցությանը:

Անշուշտ, քրդերը, մասնավորապես, Խորասանի քրդերը, գիտենալով նաև պարսկերեն լեզուն, ժամանակին, ինչպես բխում է նախորդ մեր ողջ շարադրանքից, լավ ծանոթ են եղել Ֆիրդուսու ստեղծագործությանը:

Մեր գրի առած պատումներից մի քանիսի մեջ ուղղակի ասվում է, թե՛ «Շահնամն» է այդպես ասում: Այդ պատումներից են. «Իրանի և Թուրանի կռիվը» (Քամուսի Քեշան և Աշկապուսը սպանվում են), «Ռոստամը և Բեժանը», «Ռոստամի և նրա տղա Զոհրաբի կռիվը» և այլն:

Բնորոշ է նաև այն հանգամանքը, որ այդ տարբերակները հիմնականում չափածո ձևով են մեզ հասել, հիշեցնելով «Շահնամն», որը նույնպես չափածո է գրված:

Բացի այդ, նշված հրեք տարբերակներում Ռոստամի և Զալի անձնանունների հետ հիշատակված անձնանունները Ֆիրդուսու «Շահնամնում» հանդես եկող հերոսների անձնանուններն են, ինչպես՝ Քամուսի Քեշան (Քամուս Քոշանի), Աշկապուս (Աշկաբուս), Թուս, Ֆրիդջան, Աֆրասյար (Ավրասյար, Ալֆասյար), Փիրան, Բահրամ, Հընան, Թաջավի, Բեժան (Բիժան), Օվլադ և ուրիշներ:

Նույնն են նաև տեղանունները՝ Իրան, Թուրան, Մազանդա-

³⁵ Մեր ձեռքի տակ է Հուգո Մակայի «Курдские тексты на наречии Курманджи из окрестностей Мардина», Л., 1926, ժողովածուն, նրա մեջ գտնված է «Ռոստամն Զալի» մի պատումի բովանդակությունը (էջ 100). բանասաց իմինն այդ պատումը լսել է քրդերից և պատմել է արաբներին:

³⁶ «Ֆիրդուսի» (ժողովածու), էջ 163:

րա, Քուրախանի և Շահրուազեաները և այլն: Նույնպես նման են «Շահնամեում» հանդես եկող տեղանունները:

Նշելով շարագրվածից, առանց երկմտելու հանգում ենք այն ճշմարտութեանը, որ իրոք այդ բոլորը «Շահնամեից» են անցել քրդերի մեջ, քանի որ թե բովանդակությամբ, թեև շատ համոտ, թե ձևով, թեև ուրիշական ոչ կանոնավոր շարերով, թե անձնանուններով ու տեղանուններով համընկնում և հիշեցնում են միմյանց:

Պետք է ընդգծել, որ քուրդ ժողովրդի բանահյուսութեան մեջ են անցել այն հատվածները, որոնք հիմնականում կապ ունեն Ռոստամի, նրա պալքարի և սխրագործությունների հետ: Իսկ «Շահնամեի» մյուս հատվածները, որոնք մասնավորապես կապված են թագավորների հետ, քուրդ բանասացին, նրա ունկնդրող ժողովրդին հայտնի չեն, օրինակ, թագավորներ «Քայոմարսի», «Քահանուրասի», «Ջեմշիդի», «Իրաշի», «Լոհրասպի», «Գոշթապսի» մասին եղած հատվածները, որքան մեզ հայտնի է, չեն փոխանցվել քրդական ժողովրդական բանահյուսութեան մեջ: Եվ դա հասկանալի է, ժողովրդը փոխանել է միայն այն, ինչ որ իրեն հարազատ է համահնչուն իր իղձերին ու ձգտումներին:

Սակայն փաստեր կան, որ քրդերը ոչ միայն լավ ծանոթ են եղել «Շահնամեին», այլև ճանաչել են նրա հանճարեղ հեղինակին: Դրացի պարսիկների նման նրանք նույնիսկ զրույցներ, վանդություններ են հորինել Ֆիրդուսու մասին: Այս առթիվ տեղին է նշել «Ռոստամի և Ազրիֆի կոիվը» քրդական տարբերակը, որտեղ ի թիվս «Ռոստամե Զալի» էպոսի հերոսների՝ Զալի, Ռոստամի, Գորգանի, հանդես է գալիս նաև ինքը՝ Ֆիրդուսին: Վերջինիս գործունեությունը, իբրև պալատականի, շաղկապվում է իր կերտած ստեղծագործությունների դրական հերոսների գործունեության հետ: Վերոհիշյալ տարբերակում Ֆիրդուսին ծառայում է Քավկահշա թագավորի պալատում: Քավկահշան ինչ-որ առիթով Ռոստամին հրավիրում է իր մոտ: Այդ նույն ժամանակ Կայսար քաղաքի թագավորի հրամանով զորավար Ազրիֆը մեծ զորքով գալիս է Զալի գերդաստանի վրա կռիվ: Նա պահանջում է, որ իրենց քաղաքից փախած սիրահար զույգին վերադարձնեն: Զալը չի համաձայնվում, իրենից օգնություն խնդրող երիտասարդներին չի հանձնում: Սկսվում է կռիվը: Զալը տեսնելով, որ առանց Ռոստամի դժվար է թշնամուն դիմադրել, ստիպված իր սուրհանդակին մի գրությամբ ուղարկում է Քավկահշա թագավորի մոտ, որ

Ռոստամը շտապ վերադառնաւ: Սուրհանդակը գրութիւնը նախապէս տալիս է պալատական Ֆիրդուսուն, իսկ Ֆիրդուսին իր հերթին հանձնում է թագավորին³⁷:

Սուլն ավանդութիւնը մեզ հիշեցնում է բանաստեղծի կենսագրութիւնը: Հայտնի է, որ Ֆիրդուսին պաշտոնավարել է Մահմուդ շահի պալատում³⁸, իսկ այստեղ՝ Քավկահա թագավորի պալատում:

Քրդական սուլն ավանդութիւնը մեզ թույլ է տալիս ենթադրել, թե Ֆիրդուսուն կենդանութեան ժամանակ, քրդերը ևս պետք է նրան ճանաչեին, ծանոթ լինեին նրա ստեղծագործութիւններին: Եվ դա բացառված չէ: Չէ՞ որ բանաստեղծի կենդանութեան օրոք նրա ստեղծագործութիւնները արդեն լայն տարածված են եղել պարսիկ ժողովրդի մեջ³⁹, որին հարևան էին նաև լեզվով ցեղակից քրդերը:

Նկատի ունենալով վերահիշյալ բոլոր հանգամանքները, անկասկած է, որ նրա ստեղծագործութիւնները տարածված են եղել քրդերի մեջ ևս⁴⁰: Քրդերը փոխանցել և տեղայնացրել են պոետի հղկված, մշակված և գեղարվեստորեն կատարելութեան հասած ստեղծագործութիւններն իրենց բանահյուսութեան մեջ կամ նրա կենդանութեան օրոք և կամ հետագայում⁴¹:

Սակայն Ռոստամի մասին քրդական պատումները ուսումնասիրելիս, հանդիպում են այնպիսիները, որոնք ոչ միայն չեն հիշատակում Ֆիրդուսուն կամ նրա «Շահնամեն», այլև իրենց ուրույն գծերով բավականին հեռանում են «Շահնամեի» շարադրանքից: Այսպիսի դեպքերում հնարավոր չէ պնդել, թե պատումների այդ տարրերը փոխանցված են Ֆիրդուսուն երկից: Հնարավոր է, որ դրանք տարածվել են քրդերի մեջ անկախ «Շահնամեից», իսկ մասամբ էլ՝ թերևս նրա ստեղծումից առաջ:

³⁷ Տարբերակը մեզ ասել է Ասլարանի շրջանի (ներկայումս՝ Արագածի) Ալազյազ գյուղի բնակիչ, 70-ամյա անգրագետ աշուղ Ահմե Զոյուն:

³⁸ Ավ. Շահսուվարյան, Շահնամեն և հայկական աղբյուրները, Երևան, 1967, էջ 25—26:

³⁹ Նույն տեղում, էջ 29:

⁴⁰ Բիթլիսի հյուրումեթի իշխող քուրդ Աբդալ խանը, ինչպես գրում է XVII դարի թուրք ուղևոր էվլիյա Չելեբին, իր զրադարանում ունեցել է Ֆիրդուսուն «Շահնամեի» 20 հատոր., տե՛ս «Թուրքական աղբյուրներ» ժողովածու, հատ. Գ., Երևան, 1967, էջ 255:

⁴¹ Նմանօրինակ երևույթ է քուրդ, միջնադարյան բանաստեղծների ստեղծագործութիւնների տարածվելը և պահպանվելը քրդական բանահյուսութեան մեջ:

Իսկ եթե այդպես է, ապա կարելի է մտածել նաև այն մասին, թե գուցե քրդական միջավայրում նախապես տեղ գտած՝ Ռոստամ Ջալին վերաբերող որոշ նյութեր մտել են ժողովրդական բանահյուսության այն ընդհանուր գանձարանի մեջ, որից օգտվել է Ֆիրդուսին:

Սա շատ ուշագրավ հարց է և կարող է նյութ դառնալ ավելի լայն ուսումնասիրության: Եվ քանի որ առայժմ հնարավորություն չունենք այդ խնդրին հանգամանորեն անդրադառնալու, մանավանդ պարսիկ ժողովուրդն էլ «...չի պահպանել և սերնդից-սերունդ ավանդել նախաֆիրդուսյան Իրանի վեպն ու առասպելը»⁴², մենք միայն կնշենք, որ եթե նույնիսկ էպոսի քրդական տարրերը փոխանցված չլինեին, տվյալ դեպքում պարսկական բանահյուսության մեջ, ապա ինքը՝ հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսին կարող էր նրանից տեղյակ լինել, և իր քերթվածքի համար ի թիվս պարսկական և մյուս իրանական ժողովուրդների Ռոստամի մասին պահպանած տարբերակների՝ առասպելների, ավանդույթների, օգտագործած լինեն նաև «Ռոստամն Ջալին» վերաբերող քրդական նյութը, ինչպես նաև այդ ժողովրդի բանահյուսական այս կամ այն ուշագրավ նմուշը, անգամ քրդերենի միջոցով, որը պարսկերենին մոտ է: Իսկ դրա համար կային նպաստավոր պայմաններ: Բանաստեղծի կենդանության օրոք ոչ միայն ներկայիս Իրանական Քրդստանն էր ենթարկվում պարսիկ պետականությանը, այլև ամբողջ Քրդստանը, իսկ նրա ծննդավայր Խորասանում, բացի քրդական զինվորական ստորաբաժանումներից⁴³, կային քրդական առանձին գյուղեր, որոնց բնակիչները հիմնականում զբաղվել են խաշնարածությամբ և բրդագործությամբ⁴⁴: Այդ մասին են վկայում նաև որոշ բանահյուսական ստեղծագործություններ քրդերեն լեզվով⁴⁵:

Որ Ֆիրդուսին ծանոթ է եղել հարևան քրդերին, վկայում է նաև այն, որ նա իր ստեղծագործության մեջ այս կամ այն առիթով հաճախ հիշել է նրանց: Պոետը օգտվել է նաև քրդերի բանահյուսական նմուշներից. օրինակ քրդերի ծագման մասին եղած

⁴² «Ֆիրդուսի» (ժողովածու), էջ 101, Чайкин, Фердоуси, см. „Восток“ сб. второй, М., 1935, стр. 87.

⁴³ «Материалы по истории туркмен и Туркмени», т. 1, М.—Л., 1939, стр. 256, 259.

⁴⁴ Նույն տեղում, էջ 175:

⁴⁵ Խ. Արսլյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, Երևան, 1958. էջ

քրդական հինավուրց առասպելի⁴⁶ արտացոլումը նրա «Շահնամեում»⁴⁷։ Այսպես, «Զոհակ»⁴⁸ պոեմում պատմվում է, որ Զոհակի ուսերի վրա սկսում են երկու օձեր աճել, նրանց կերակրում են երկու երիտասարդի ուղեղով։ Խոհարարներ՝ Արմայիլը և Քարմայիլը որոշում են այդ զոհերից մեկին ազատել, իսկ մյուսի ուղեղի հետ ոչխարի ուղեղ գաղտագողի խառնել և տալ օձ-վիշապներին։ Իվ ահա փրկվածները հետզհետե հավաքվում, մի ցեղախումբ են կազմում, որ հայտնի է դառնում քուրդ անունով։ Ֆիրդուսին գրում է.

Իսկ մյուսին ասացին թե. «Մենք կփրկենք կյանքը քո,
Բայց դու հեռու պետք է ապրես այս ամրոցից մշտագու:
Քո աչքերը կշլանան քաղաքներից ոսկեշող,
Ուստի դաշտերն ու լեռները քեզ օթեան լինեն թող»:
Ամեն ամիս երեսուն-երեսուն ծածուկ պահած պատանին
Ազատեցին, որ սև մահը չգնա նրանց էլ տանի:
Գաղտնարանում երբ հավաքվեց ուղիղ երկու հարյուր մարդ,
Նրանց այնպես ծածուկ տարան, որ չլարեն նոր թակարդ,
Ապա նրանց գաղտնիանցքից դուրս բերեցին մի բաց դաշտ,
Այժ ու ոչխար բաժանեցին, որ միշտ ապրեն հեզ ու հաշտ:
Եվ դրանից առաջացավ քրդական մի ցեղաձյուղ,
Որոնց համար երկնքի տակ ոչ քաղաք կար, և ոչ գյուղ:
Սև սրտի պես սև վրանի տակ ապրում են քոչն քոչ,
Ոչ վախ ունեն իրենց սրտում, և ոչ սարսափ՝ երկնակոչ⁴⁹:
(հատված «Զոհակից»)

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ, ինչպես բանասեր Մուստաֆա Քելվանին է գրել, մեծ բանաստեղծը իր հանճարեղ ստեղծագործությունն մեջ զետեղել է նաև քրդական առածներ ու ասացվածքներ։ Գրել է քրդերի քաջագործությունների և միաժամանակ անհեռատես և անհոգ լինելու մասին⁵⁰:

⁴⁶ Տե՛ս Շարաֆ-хан Бидлиси, Шараф-наме, т. 1, 1967, стр. 81—82.

⁴⁷ Քուրդ ժողովրդին շատ մոտիկից ծանոթ է եղել և նրա հարուստ բանահյուսությամբ հետաքրքրվել և մշակել է նաև մի ուրիշ պարսկերեն գրող՝ ադրբեջանական հանճարեղ պոետ Նիզամի Դյանշեին (Низами Кенчави, Елди Ко-зэл, Баку, 1941; стр. 214—232).

⁴⁸ «Զոհակ թագավորի մասին» վերնագրով քրդական ավանդություն (պատմելվածք) գոյություն ունի, տես՝ М. Б. Руденко, Описание курдских рукописей Ленинградских собраний. М., 1961, стр. 15.

⁴⁹ Պարսկերենից թարգմ. Ս. Ումադյանը:

⁵⁰ Շահնամակ Ֆիրդուսիի, դրվագ «Արտաշիր Բարականի», թարգմ. Զ. Քիրաթյան, Նյու-Յորք, 1909, էջ 34: ۹ ص ۹۷۶ شاما, ۱۹۶۶, «شاما».

Այս բոլորը խոսում են ի նպաստ այն ենթադրության, որը, սակայն, հետագա ուսումնասիրման ու հիմնավորման կարիք է դրում, որ Ֆիրդուսու «Շահնամեր» մեջ թերևս կա նաև քուրդ բանահյուսության ներդրումը:

Սակայն անկախ այդ մասնավոր խնդրի դրական կամ բացասական լուծումից «Ռոստամե Ջալ» էպոսի քրդական տարբերակները պահպանում են իրենց մեծ և ուրույն գեղարվեստական արժեքը և անբաժանելի են «Շահնամեից» իբրև այդ համաշխարհային կոթողի ուղեկիցների:

АДЖИЕ ДЖНДИ

К ВОПРОСУ О КУРДСКИХ ВАРИАНТАХ ЭПОСА «РОСТАМЕ ЗАЛ»

Резюме

Многочисленные варианты эпоса «Ростаме Зал» имеют широкое распространение в фольклоре курдского народа. В настоящем исследовании выявлены идейные и художественные достоинства курдских вариантов данного эпоса и определены их роль и место в курдском фольклоре. Курдские варианты эпоса «Ростаме Зал» рядом своих черт соприкасаются с «Шах-наме» великого поэта Фирдоуси. Не исключено, что Фирдоуси наряду с многочисленными другими материалами использовал также элементы курдских вариантов эпоса, связанные с именем Ростамы.